


## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2013թ. մարտին


/վերլուծություն/

2013թ. մարտին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 16282 գործարքներ, որոնց քանակը 2013թ. փետրվարի համեմատ աճել է 11.7%-ով, իսկ 2012թ. մարտի համեմատ՝ 17.9%-ով:

2013թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2013թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2013թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4132 օտարման գործարքների 73.2%-ը կազմել են առուվաճառքները, 26.7%-ը՝ նվիրատվությունները և 0.1%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 39.6%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 38.2%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2013թ. մարտին, 2013թ. փետրվարի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը աճել է 13.5%-ով, իսկ 2012թ. մարտի համեմատ՝ 14.5%-ով:

2013թ. մարտին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 64.0%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2013թ. մարտին, 2013թ. փետրվարի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 28.9%-ով, իսկ 2012թ. մարտի համեմատ՝ 8.7%-ով:

2013թ. մարտին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	մարտ 2012թ.	մարտ 2013թ.	փետրվար 2013թ.
<b>Կենտրոն</b>	400000	426100	424100
<b>Արաբկիր</b>	333050	353500	352100
<b>Քանաքեռ-Զեյթուն</b>	260000	281400	280200
<b>Նոր-Նորք</b>	225050	248100	245100
<b>Ավան</b>	233000	256800	255000
<b>Էրեբունի</b>	233100	247100	245200
<b>Շենգավիթ</b>	229000	252500	251200
<b>Դավթաշեն</b>	254500	272000	269900
<b>Աջափնյակ</b>	221050	245000	243000
<b>Մալաթիա-Սեբաստիա</b>	219750	237000	235600
<b>Նուբարաշեն</b>	140100	148000	146200
<b>Միջինը Երևանում</b>	<b>249900</b>	<b>269800</b>	<b>268000</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. մարտին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013թ. փետրվարի համեմատ, աճել են 0.7%-ով:

2013թ. մարտին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 349 բնակարաններ, որոնց քանակը, 2013թ. փետրվարի համեմատ նվազել է 13.0%-ով, իսկ 2012թ. մարտի համեմատ աճել՝ 7.4%-ով:

2013թ. մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		մարտ 2012թ.	մարտ 2013թ.	փետրվար 2013թ.
<b>Արագածոտն</b>	<b>Աշտարակ</b>	110000	114800	114000
	<b>Ապարան</b>	48000	55000	54200
	<b>Թալին</b>	60800	62500	62500
<b>Արարատ</b>	<b>Արտաշատ</b>	91100	94800	94500
	<b>Մասիս</b>	107200	113300	113000
	<b>Վեդի</b>	95000	98500	98500
	<b>Արարատ</b>	72000	75100	75100

Արմավիր	Վաղարշապատ	151000	154000	153500
	Արմավիր	116800	121000	120000
	Մեծամոր	85100	87500	86500
Գեղարքունիք	Սևան	96000	99150	99000
	Գավառ	51000	59000	59000
	Մարտունի	100000	107600	107600
	Վարդենիս	32000	43500	42050
	Ճամբարակ	21000	27500	26500
Լոռի	Վանաձոր	83500	88300	88000
	Ստեփանավան	72000	74500	74500
	Սպիտակ	98000	99800	99800
	Ալավերդի	49000	54800	54500
	Տաշիր	40000	45900	44100
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
Կոտայք	Ախթալա	19500	19800	19800
	Աբովյան	151000	154000	153200
	Նոր Հաճն	127900	128500	128500
	Բյուրեղավան	106800	108100	107100
	Եղվարդ	108000	109300	109300
	Հրազդան	56500	63800	62500
	Ծաղկաձոր	292000	292500	292500
Շիրակ	Զարենցավան	82500	85500	85050
	Գյումրի	107000	109300	109300
	Արթիկ	64100	66300	66300
Սյունիք	Մարալիկ	35600	40100	40100
	Գորիս	115000	119000	118200
	Կապան	88000	91500	91000
	Սիսիան	78100	89500	89500
	Մեղրի	65000	78000	77100
	Ագարակ	39700	46000	44200
	Քաջարան	94050	94300	94300
Վայոց Ձոր	Դաստակերտ	8000	8000	8000
	Վայք	82000	93000	92500
	Եղեգնաձոր	115100	120000	120000
Տավուշ	Ջերմուկ	100000	111000	110500
	Դիլիջան	102000	110500	109600
	Իջևան	110000	118100	117000
	Բերդ	48500	58100	58100
	Նոյեմբերյան	40000	47000	46700
	Այրում	24500	30100	29000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013թ. փետրվարի համեմատ, աճել են 0.5%-ով:

2013թ. մարտին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 394 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 105, մարզերում միասին վերցրած՝ 289: 2013թ. մարտին, 2013թ. փետրվարի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 1.3%-ով, ընդ որում Երևանում աճել՝ 1.0%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել՝ 2.0%-ով: 2012թ. մարտի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 3.4%-ով, ընդ որում Երևանում՝ մնացել է անփոփոխ, իսկ մարզերում միասին վերցրած նվազել՝ 4.6%-ով:

2013թ. մարտին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են

հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները/դրամ/		
	մարտ 2012թ.	մարտ 2013թ.	փետրվար 2013թ.
<b>Կենտրոն</b>	458800	474000	473000
<b>Արաբկիր</b>	364000	381150	379800
<b>Քանաքեռ Զեյթուն</b>	274700	293450	292300
<b>Նորք Մարաշ</b>	301000	318400	315500
<b>Ավան</b>	249200	269750	268250
<b>Էրեբունի</b>	219100	238850	237000
<b>Շենգավիթ</b>	239000	253900	252500
<b>Դավթաշեն</b>	257000	275200	273200
<b>Աջափնյակ</b>	236000	249000	247000
<b>Մալաթիա Սեբաստիա</b>	219000	237100	235600
<b>Նուբարաշեն</b>	144500	149550	148000
<b>Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)</b>	<b>269300</b>	<b>285500</b>	<b>283800</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. մարտին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2013թ. փետրվարի համեմատ աճել են 0.6%:

2013թ. մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առավաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		մարտ 2012թ.	մարտ 2013թ.	փետրվար 2013թ.
Արագածոտն	Աշտարակ	130100	136200	135600
	Ապարան	51200	59500	59000
	Թալին	68450	68650	68650
Արարատ	Արտաշատ	97400	99200	99200
	Մասիս	110050	114600	114600
	Վեդի	99500	101400	101400
	Արարատ	86900	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	143800	153100	152300
	Արմավիր	99100	107000	106500
Գեղարքունիք	Սևան	88300	94800	94200
	Գավառ	44900	57100	57100
	Մարտունի	89350	96000	95000
	Վարդենիս	33000	39800	39800
	Ճամբարակ	25900	30000	29850
Լոռի	Վանաձոր	94100	100000	99500
	Ստեփանավան	86900	89800	89200
	Սպիտակ	111100	114000	113600
	Ալավերդի	42150	48300	48300
	Տաշիր	50100	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	13200	14000	13200

	Ախթալա	29400	30000	29600
Կոտայք	Աբովյան	143300	155800	154700
	Նոր Հաճն	127200	129800	129800
	Բյուրեղավան	119900	120500	120000
	Եղվարդ	114400	116100	116100
	Հրազդան	77000	82400	82400
	Ծաղկաձոր	303600	305000	305000
	Չարենցավան	74000	83000	82500
Շիրակ	Գյումրի	115100	118500	118000
	Արթիկ	59900	63100	63100
	Մարալիկ	48000	52000	51700
Սյունիք	Գորիս	126800	130000	129200
	Կապան	97600	99500	99100
	Սիսիան	87600	95000	94000
	Մեղրի	74000	83500	83000
	Ագարակ	45900	46900	46900
	Դաստակերտ	11600	11610	11610
Վայոց Ձոր	Վայք	81200	89000	89000
	Եղեգնաձոր	109400	116600	116600
	Ջերմուկ	118400	130000	130000
Տավուշ	Դիլիջան	103000	111100	111100
	Իջևան	119800	122000	122000
	Բերդ	57700	59000	59000
	Նոյեմբերյան	45600	47000	47000
	Այրում	34200	35100	34600

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2013թ. փետրվարի համեմատ, աճել են 0.4%-ով:

Ընդհանուր առմամբ, 2013թ. մարտին հանրապետությունում օտարվել են 1424 միավոր /642.87 հա/ հողեր, որից Երևանում՝ 147 միավոր /10.08 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 754 միավոր /585.04 հա/, որից Երևանում՝ 3 միավոր /1.53 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 532 միավոր /45.27 հա/, որից Երևանում՝ 125 միավոր /6.34 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 112 միավոր /7.22 հա/, որից Երևանում՝ 19 միավոր /2.21 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 13 միավոր /1.65 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 6 միավոր /3.25 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 6 միավոր /0.34 հա/,
- ջրային հողեր՝ 1 միավոր /0.10 հա/ ընդհանուր մակերեսով:

2013թ. մարտին հանրապետությունում օտարված հողերից 1142 միավորի /551.66 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 123 միավոր /8.41 հա/, նվիրատվության գործարքներ՝ 277 միավորի /90.66 հա/, որից Երևանում՝ 21 միավոր /1.33 հա/ և փոխանակության գործարքներ՝ 5 միավորի /0.55 հա/, որից Երևանում՝ 3 միավոր /0.33 հա/:

Հանրապետությունում 2013թ. մարտին, 2012թ. մարտի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 12.2%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 4.8%-ով,

բնակավայրերի հողերի նկատմամբ աճել է 26.2%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 29.4%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արարատի մարզում՝ 114.80 հա, որից 109.92 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 28.5%-ը կամ 326 գործարքներ /136.41 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 85 միավոր /4.24 հա/, իսկ 70.1%-ը կամ 801 միավորը /403.11 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 38 միավոր /4.17 հա/: 2013թ. մարտին հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 15 գործարք /12.13 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2013թ. մարտին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող															
	Գյուղատնտեսական նշանակության հողերի				Արդյունաբերական օբյեկտների հողեր				Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի				Արդյունաբերական օբյեկտների հողեր				Բնակավայրերի հողեր			
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/						
Երևան	0	0.00	0	0.00	71	2.57	14	1.67	3	1.53	0	0.00	32	2.50	3	0.14								
Արագածոտն	46	22.56	0	0.00	12	0.22	8	0.97	91	54.65	1	0.07	18	1.80	1	0.32								
Արարատ	13	7.95	1	0.01	1	0.10	14	0.52	80	89.93	5	0.14	47	3.90	5	0.15								
Արմավիր	5	8.24	0	0.00	2	0.06	4	0.07	86	70.01	0	0.00	41	4.38	1	0.02								
Գեղարքունիք	2	8.45	0	0.00	46	3.66	8	0.53	17	10.68	0	0.00	28	3.88	2	0.12								
Լոռի	0	0.00	1	0.72	0	0.00	4	0.05	30	8.77	1	0.31	11	0.88	1	0.03								
Կոտայք	21	39.35	0	0.00	6	0.49	4	0.03	97	66.08	0	0.00	66	5.56	7	0.48								
Շիրակ	0	0.00	1	0.21	6	0.36	6	0.36	29	28.56	0	0.00	16	2.34	3	0.04								
Սյունիք	3	30.43	0	0.00	0	0.00	0	0.00	16	12.20	0	0.00	7	1.05	1	0.07								
Վայոց Ձոր	1	0.78	2	0.19	1	0.09	1	0.004	5	19.15	0	0.00	11	0.92	0	0.00								
Տավուշ	3	3.32	0	0.00	5	0.62	6	0.57	23	9.29	0	0.00	11	1.12	1	0.002								
Ընդամենը	94	121.08	5	1.13	150	8.17	69	4.77	477	370.85	7	0.52	288	28.33	25	1.37								

Ստորև ներկայացվում է 2013թ. մարտին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյուն ար օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Գյուղ. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակ կան կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակ կան կառուցապ. հողերի	
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	
Երևան	61	1.00	0	0.00	48	0.83	13	0.17	24	3.24	0	0.00	0	0.00	23	1.74	1	1.50
Արագածոտն	17	0.68	0	0.00	12	0.22	5	0.46	4	0.81	1	0.30	0	0.00	0	0.00	3	0.51
Արարատ	1	0.04	0	0.00	0	0.00	1	0.04	28	8.53	13	7.95	1	0.01	1	0.10	13	0.47
Արմավիր	2	0.04	0	0.00	0	0.00	2	0.04	8	7.79	4	7.69	0	0.00	2	0.06	2	0.04
Գեղարքունիք	8	0.69	0	0.00	7	0.56	1	0.13	48	11.95	2	8.45	0	0.00	39	3.10	7	0.40
Լոռի	2	0.73	1	0.72	0	0.00	1	0.01	3	0.05	0	0.00	0	0.00	0	0.00	3	0.05
Կոտայք	2	0.16	0	0.00	2	0.16	0	0.00	28	39.61	20	39.25	0	0.00	4	0.33	4	0.03
Շիրակ	5	0.09	0	0.00	2	0.04	3	0.05	8	0.85	0	0.00	1	0.21	4	0.33	3	0.31
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	3	30.43	3	30.43	0	0.00	0	0.00	0	0.00
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	5	1.06	1	0.78	2	0.19	1	0.09	1	0.004
Տավուշ	1	0.19	0	0.00	0	0.00	1	0.19	13	4.33	3	3.32	0	0.00	5	0.62	5	0.39
Ընդամենը	99	3.62	1	0.72	71	1.81	27	1.09	172	108.65	47	98.17	4	0.41	79	6.37	42	3.70

2013թ. մարտին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 47 գործարք /22.91 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2013թ. մարտին, 2012թ. մարտի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 28.5%-ով: Ընդ որում, Երևանում՝ աճել է 24-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ աճել է 10.9%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 14.5%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել է 3.2 անգամ, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 2.3%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 69.2%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. մարտին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ						36	33.39	365.0	12000.0	3600.0
Ապարան	1	0.30	380.0	380.0	380.0	4	1.65	86.5	2727.3	725.5
Թալին						48	16.75	93.6	5494.5	655.2
Ծաղկահովիտ						3	2.87	79.5	1000.0	270.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	3	2.48	81.0	517.0	228.6	37	11.10	335.1	10833.3	2848.4
Մասիս	8	4.30	77.5	398.0	195.7	29	21.07	200.0	11904.8	3132.8
Վեդի	2	1.16	77.4	4495.2	2286.3	12	57.41	207.0	10795.1	1849.1
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	2	1.69	174.8	271.4	223.1	50	29.03	294.3	9090.0	1413.1
Բաղրամյան						18	32.95	90.6	2561.1	790.0
Վաղարշապատ	2	6.00	244.1	244.1	244.1	11	3.12	444.4	11764.7	2324.8

Գեղարքունիքի մարզ										
Գավառ	2	8.45	117.6	129.0	123.3	1	0.63	199.8	1875.0	415.2
Ճամբարակ						9	5.82	60.5	953.3	352.5
Մարտունի						3	0.35	51.1	2850.0	738.5
Սևան								52.2	2134.8	318.5
Վարդենիս						4	3.88	41.2	2575.1	410.0
Լոռու մարզ										
Ալավերդի						2	0.68	170.4	6424.2	602.3
Գուգարք						15	3.72	234.6	6065.9	760.0
Սպիտակ						8	1.85	250.0	5555.5	730.8
Ստեփանավան						3	1.80	90.6	1686.6	318.0
Տաշիր						2	0.72	45.3	1384.4	153.5
Կոտայքի մարզ										
Աբովյան	8	15.90	245.6	363.7	271.9	20	13.21	279.3	11942.7	4535.0
Եղվարդ	9	7.30	84.4	212.2	433.3	50	41.97	174.4	11971.8	2644.4
Հրազդան	3	16.05	1108.5	1118.1	1113.5	26	10.74	130.5	10256.4	1700.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						9	10.08	252.0	1693.1	615.2
Ամասիա								40.9	261.0	128.5
Անի						17	16.78	110.6	546.9	380.0
Աշոցք								58.5	215.8	126.1
Արթիկ						3	1.71	79.4	1428.6	410.0
Սյունիքի մարզ										
Գորիս						1	1.00	92.6	1023.2	718.0
Կապան	3	30.43	137.5	558.2	277.7	1	0.64	120.0	841.6	350.0
Մեղրի						4	0.26	193.0	3000.0	730.0
Սիսիան						10	10.30	46.3	1977.4	535.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						4	18.13	125.0	10000.0	1900.0
Վայք	1	0.78	178.0	178.0	178.0	1	1.02	58.8	1430.7	625.0
Տավուշի մարզ										
Բերդ						14	5.41	213.3	3783.8	680.0
Իջևան	2	2.45	154.0	473.1	313.6	5	1.69	267.5	9454.5	1242.0
Դեկտեմբերյան	1	0.87	151.7	151.7	151.7	4	2.19	46.7	7368.4	871.3

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. մարտին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Մտավելագույն	Միջին			Նվազագույն	Մտավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						16	15011.0	130.7	22200.0	2575.7
Ապարան						1	1240.0	124.1	609.6	391.0
Թային						1	1700.0	63.2	1454.8	152.4
Ծաղկահովիտ								60.0	214.3	87.0
Արարատի մարզ										
Արտաշատ	1	1000.0	325.0	325.0	325.0	16	14319.1	173.9	7140.3	895.0
Մասիս						20	11999.0	187.5	25000.0	1210.0



Վեղի						11	12716.2	126.1	5000.0	661.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						23	28779.1	131.6	9090.9	1215.4
Բաղրամյան						2	2400.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ	2	600.0	3828.0	3828.0	3828.0	16	12612.0	197.4	26528.4	1530.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	9	11450.0	113.2	113.4	113.3	5	5100.0	186.6	1084.3	683.0
Ճամբարակ								71.3	2286.2	148.1
Մարտունի	30	19516.0	113.5	229.0	205.2	19	25554.8	119.3	5000.0	282.5
Սևան								240.0	3110.4	315.0
Վարդենիս						4	8123.6	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Ալավերդի								114.3	1388.9	216.6
Գուգարք						7	5218.0	77.9	14083.3	1262.0
Սպիտակ						2	1300.0	104.9	1348.3	206.0
Ստեփանավան						2	2312.0	88.2	1666.7	175.5
Տաշիր								45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Արուսյան	2	1522.5	641.0	4750.3	2695.7	26	23147.5	264.5	35353.5	1985.0
Եղվարդ	1	800.0	3102.5	3102.5	3102.5	35	27569.5	173.6	27000.0	2854.8
Հրազդան	1	1000.0	1272.0	1272.0	1272.0	5	4912.0	117.7	34848.5	1318.3
Շիրակի մարզ										
Ախուրյան	2	850.0	554.4	1344.0	949.2	7	8144.0	113.6	18750.0	333.3
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի	2	2400.0	133.2	133.2	133.2	3	4420.0	67.9	180.6	171.0
Աշոցք								40.8	144.0	63.2
Արթիկ						6	10810.3	111.8	5000.0	217.0
Սյունիքի մարզ										
Գորիս						1	1152.0	112.2	1700.0	367.9
Կապան						1	600.0	67.9	2638.9	300.0
Մեղրի						3	1274.4	68.5	632.9	208.0
Սիսիան						2	7510.0	123.5	875.0	206.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր						9	7914.4	96.7	7659.6	502.7
Վայք	1	852.4	862.3	862.3	862.3	2	1298.0	120.7	1448.3	214.0
Տավուշի մարզ										
Բերդ	1	192.0	1583.3	1583.3	1583.3	1	490.0	75.8	810.0	114.0
Իջևան	4	6007.9	233.1	3000.0	2308.3	7	6548.1	74.1	14423.1	518.0
Դեկտեմբերյան						3	4136.0	125.0	1948.1	228.0

2013թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 783 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.8%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 71.3%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2013թ. մարտին, 2013թ. փետրվարի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը է 0.4%-ով, իսկ 2012թ. մարտի համեմատ՝ 6.5%-ով:

2013թ. մարտին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 73 բնակարանների, 89 անհատական բնակելի տների, 309 հասարակական, 85 արտադրական նշանակության օբյեկտների, 207 հողերի և 20 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2013թ. մարտին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 17 վարձակալության գործարքների, այդ թվում 14 միավոր /0.22 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2013թ. փետրվարի համեմատ ն է 63.0%-ով, իսկ 2012թ. մարտի համեմատ՝ 64.6%-ով: 2013թ. մարտին հանրապետությունում վարձակալված 1854.68 հա հողերից 0.36 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 1854.33 հա հողերից 1806.21 հա կազմում են

գյուղատնտեսական նշանակության, 15.49 հա արդյունաբերական օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 931.06 հա, որից 930.95 հա գյուղատնտեսական նշանակության:

2013թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1979 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.2%ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2013թ. փետրվարի համեմատ աճել է 23.2%-ով, իսկ 2012թ. մարտի համեմատ՝ 0.9%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /49.9%/, առանձնատների /24.6%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.1%/ և հողերի /7.4%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1108 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2013թ. փետրվարի համեմատ աճել է 33.7%-ով, իսկ 2012թ. մարտի համեմատ՝ 16.9%-ով:

2013թ. մարտին հանրապետությունում գրավադրվել են 262.51 հա հողեր, որից 6.88 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 95.8%-ը կամ 251.53 հա գյուղատնտեսական նշանակության են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արագածոտնի մարզում՝ 133.87 հա, որից 133.81 հա գյուղատնտեսական նշանակության:

2013թ. մարտին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 159 գործարքներ, որից 114-ը՝ Երևանում: 2013թ. փետրվարի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 55.9%-ով, ընդ որում Երևանում՝ 83.9%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 12.5%-ով: 2012թ. մարտի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 3.2 անգամ, ընդ որում Երևանում՝ 3.7 անգամ, իսկ մարզերում միասին վերցրած՝ 2.5 անգամ:

2013թ. մարտին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2000 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2013թ. փետրվարի համեմատ աճել է 7.8%-ով, իսկ 2012թ. մարտի համեմատ՝ 64.1%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 12.3%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /34.0%/:

## **« Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**